



ԵՐԿՈՒԵԱՔԹԻ, 1 ՄԱՐՏ, 2021

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 119

ՍՈՐՎԵՑՈՒՐ ԻՆՏԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Սորվեցուր ինձի, Տէր, կանոնների պահելու կերպը,  
եւ մշտապէս պիտի կատարեմ վանոնք:  
Տուր որ հասկնամ Օրէնքդ,  
որպէսպի կատարեմ եւ ամբողջ սրտով հնազանդիմ անոր:  
Պատուէրներուդ շաւիղին մէջ առաջնորդէ վիս,  
որովհետեւ անոնցմէ՝ հաճոյք կ'առնեմ:  
Ըրէ այնպէս՝ որ սիրտս պատուիրաններուդ փափաքի,  
Քան անձնական հարստութիւն դիպելու:  
Հայեացքս հեռացուր դատարկ բաներէն,  
եւ քու կամքիդ գործադրութեամբ՝ կեանք Կուր ինձի:  
Ես քու ծառայ եմ, կատարէ ինձի Կուր խոստումդ,  
այն խոստումը՝ որ կու փաս քեզմէ ակնածողներուն:  
Հեռու պահէ նախապիւնքը՝ որմէ այնքան կը վախնամ,  
որովհետեւ վճիռների արդար են:  
Միակ փափաքս է՝ հրահանգների կատարել.  
Կեանք Կուր ինձի, դուն՝ որ արդար ես:

### ՆԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ է՞ն հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ է՞ն արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



## ԱՌԱԿԱՅ

### **ՅՈՐՈՂՐԱՆՔ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐՈՒՆ 3:1-10**

Սողոմոն Իմաստուն կը շարունակէ իր յորդորները փոխանցելու անգամ մը եւս նոյն արքայապարտութեամբ «Որդեակ իմ» եւ յիշեցումի կարգով կ'ըսէ. «Մի մոռնար իմ օրէնքս, հապա քու սիրտդ թող իմ պարտութեանքներս պահէ, որովհետեւ քեզի երկայն օրեր ու կենդանութեան փարիներ եւ յաջողութիւն պիտի աւելցնեն» 1-2 հմբ: Հեղափոխական է, որ մարդ արարածը միշտ յիշեցումի կարիքը ունի, որովհետեւ մարդու միտքը ենթակայ է մոռացութեան, մանաւանդ երբ այդ միտքը լեցուն է սրահոգութիւններով, փարբերփարբեր խորհուրդներով, առաւել եւս կարծէք սկիզբի մեր սորվածները կը սկսինք մոռնալու: Ահա այդ երեւոյթը նկարի առած կը թելադրէ որ մնայուն մտքին մէջ թարմ մնայ Աստուծոյ օրնէքը ու սրտին մէջ Անոր պարտութեանքները: Այս պարագային սրտին մէջ պահել կը նշանակէ անոր մասին մտածել, խորհրդածել, ինչպէս պիտի ըսէ Մաղմոսերգուն. «Խօսքդ սրտիս մէջ պահեցի, որպէսզի չըլլայ որ քեզի դէմ մեղանչեմ» 119:11: Ահա Մաղմոսերգուն աւելի յստակ կը դարձնէ «սրտիդ մէջ պահէ» արքայապարտութիւնը, որպէսզի մեղք չգործեն: Որովհետեւ «սրտիդ մէջ պահէ» խօսքը պարզապէս չի նշանակեր անգիր իմանալ, գոց գիտնալ, այլ՝ որպէսզի մեղքէն հեռու մնալ, եւ այդ մեղքէն հեռու մնալու հետեւանքը, արդիւնքը երկար կեանք ունենալու եւ յաջողութիւն գտնելու: Այսպէս եւս երկար կեանք հասկացողութիւնը պարզ, սովորական կեանքի մասին չէ, այլ յաւիտենական կեանքին, ինչպէս պիտի ըսէ Քրիստոս. «Ես եկայ, որպէսզի կեանք ունենայք, եւ առաւել կեանք»: Երբ Աստուծոյ Օրէնքը կը պահեն, որ զիս մեղքէն հեռու պիտի պահէ, այլ խօսքով ինծի երկար կեանք փութ կ'ըլլայ, որովհետեւ մեղքին վարձքը մահ է:

Ապա կը շարունակէ ըսելով. «Թող ողորմութիւնն ու ճշմարտութիւնը թող քեզ չթողուն. զանոնք քու պարանոցիդ վրայ կապէ, ու քու սրտիդ փախարակին վրայ գրէ»: Ողորմութիւն ըսելով կը նշանակէ այն նոյն ողորմութիւնը ինչ որ Աստուծոյ Ինք ցուցաբերեց մեղաւոր մարդուն նկատմամբ, այսինքն՝ Աստուծոյ ողորմութիւնը միշտ քեզի հետ ունեցիր, եւ այդ ողորմութիւնն ալ բաշխէ ուրիշին: Ահա Քրիստոսի խօսքին մէկ այլ ուրիշ փարբերակը երբ կ'ըսէ. «Ողորմած եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը ողորմած է»: Այսինքն նմանիլ Աստուծոյ, եւ երբ այդ ողորմութենէն նստելու բաժին կը հանեն ուրիշին, այն արեւն շնորհք եւ բարի համարում կը գտնեն: Այդ ողորմութիւնն ու ճշմարտութիւնը պարանոցիս վրայ իբրեւ առաքինութեան զարդարանք եւ սրտիս փախարակին վրայ արձանագրուած, եւ ոչ քարէ փախարակներու վրայ, ինչպէս որ է պարագան փաստաբանեայ պարտութեաններուն, քարէ փախարակներու վրայ: Սրտիս փախարակին վրայ, որ կը նշանակէ մնայուն խորհրդածութեան առարկայ դառնայ այդ ողորմութիւնը եւ ճշմարտութիւնը:

Շարունակելով իր խրատը կ'ըսէ. «Բոլոր բոլոր սրտով Տիրոջ ապաւինէ եւ քու իմաստութեանդ մի վստահիր»: Յիշեցում է դարձեալ ամբողջական վստահութեամբ Աստուծոյ ապաւինելու, որովհետեւ յաճախ կրնանք կասկածներ ունենալ, յաճախ մեր գիտութեան, մեր ոյժին, մեր հարստութեան վստահելու: Այո, Աստուծոյ մեզի փութ է այդ գիտութիւնը, այդ կարողութիւնը, միտքը, սակայն չմոռնանք, որ այդ բոլորը ենթակայ են փոփոխութեան, մաշելու, հիննալու, կորսուելու: Անոր համար ալ կը յիշեցնէ, որ ապաւինիլ բանի մը որ մնայունն է եւ ոչ թէ ժամանակաւորը, գնայունը, մաշող ու փոփոխուողը: Ապա կրկնութեան գնով կ'ըսէ. «Տիրոջմէ վստահիր ու չարութենէ եր քաշուիր», ահա աւելի յստակ կը դառնայ, որ Տիրոջ երկիւղը ուրիշ բան չէ եթէ ոչ չարութենէ հեռու մնալ: Իսկ այս բոլորի արդիւնքը կ'ըլլայ «չիղերուդ առողջութիւն եւ ոսկորներուդ պարարտութիւն», այլ խօսքով մտքի, հոգիի ու մարմնի առողջութիւն: Չմոռնանք, որ ընդհանրապէս մարմնաւոր փախարակն ու ցաւերը արդիւնքն են հոգեւոր փախարակին, մեղքին, առաւել սրահոգութիւնները, վախն ու սարսափը, անորոշութիւնը իրենց բացասական ազդեցութիւնը կրնան ունենալ մեր ֆիզիքականին վրայ: Բայց երբ ամբողջական վստահութիւնը ունինք Աստուծոյ, հեռու ենք չարութենէն, այն արեւն մեր ներքին խաղաղութիւնը ունինք, ար այս անգամ իր դրական ազդեցութիւնը կրնայ ունենալ մեր ֆիզիքականին վրայ:

Ապա կ'ըսէ. «Տերը պարտէ քու սրտուածքովդ եւ քու բոլոր բերքերուդ երախայրիներովդ, եւ քու շրեմարաններդ առարտութիւնով պիտի լեցունին, ու հնձաններդ նոր գինին դուրս պիտի թափի» 10 հմբ: Այս պարագային ըսել կ'ուզէ երախարակութեամբ անդրադառնալու փութ ու մեր վայելած բարիքներուն, որոնք Աստուծոյ կու գան, ինչպէս պիտի ըսէ Յակոբոս Առաքեալ. «Ամէն բարիք երկինքէն կու գայ, Տիրոջմէ» Յակոբոս 1:16: Այդ բարիքներէն բաժին հանել կը նշանակէ նախ անդրադառնալ որ այդ բոլորին փութը Աստուծոյ Ինք է, միւս կողմէ այդ բարիքներէն բաժին հանել մեր նմանին: Այլապէս Աստուծոյ այդ փաստանորդի հասկացողութիւնը չտուաւ պարզապէս մեր շահածին փաստանորդը Իրեն փախարակ, Իրեն փութով Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Դուք ձեզ ընծայեցէք» եւ կամ այրի կնոջ նման. «Ամբողջութեամբ փութ ինչ որ ունէր»: Ուրեմն գիտակցութեան առիթ է, անդրադարձի առիթ է, ու մանաւանդ մեր նմանին մասին մտածելու լուսազոյն առիթն է: Նմանինք Աստուծոյ: